

Շուշանիկ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄՅԱՆ
Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարան

**ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԶԱՅՐՈՒՅԹ ՀՈՒՅՁԻ ՈՐՈՇ ԻՍԱՍՏԱՅԻՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սույն հոդվածի նպատակն է անգլերեն լեզվում «գայրույթ» հույզի որոշ իմաստային յուրահատկությունների վերհանումը: Ի դերն են հանվում «գայրույթ» հույզի հոմանիշային շարքի ինչպես ընդհանրական, այնպես էլ տարբերակիչ հատկանիշները՝ որպես հիմք առնելով սույն հույզի տարատեսակ դասակարգումները:

***Բանալի բառեր.** գայրույթ, հույզ, իմաստաբանական հատկություն, հուզականություն, հոմանիշային շարք, ուժգնություն, ընդհանրական հատկանիշ, տարբերակիչ հատկանիշ*

Ուսումնասիրության առարկայի խնդիրը բարդանում է այնքանով, որքանով դժվար է սահմանել վերացական եզրույթները, որոնք լեզվաբանության այս ճյուղի համար առաջնային են: Այդպիսի եզրույթներից է հույզը: Որպես վերացական երևույթ այն չի կարող ունենալ գիտական զուտ մեկ սահմանում: Սակայն սահմանումների ընդհանրությունը կայանում է նրանում, որ հույզը դիտարկվում է որպես մարդկային զգացմունք, որը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական:

Հոդվածի շրջանակներում մենք կդիտարկենք հույզը իր ամենալայն իմաստով: Հուզականությունը լեզվաբանության մեջ հաճախ կապում են արտահայտչականության հետ: Լեզվաբան Վ. Ն. Տելիան, օրինակ, համարում է արտահայտչականությունը լեզվաբանության կարևորագույն հիմնախնդիրներից և նույնացնում է հուզականությունը և արտահայտչականությունը /Телня, 1986: 76/: Մենք նույնպես հարում ենք այդ տեսակետին:

Անգլերենում «գայրույթի» ուղիղ թարգմանությունն է anger բառը: Անգլերեն լեզվի ավանդական Oxford բառարանը /Oxford Dictionary/ սահմանում է anger-ը որպես «վրդովմունքի, դժգոհության կամ թշնամանքի ուժեղ զգացմունք», մինչդեռ ըստ Merriam-Webster բառարանի /Merriam-Webster Dictionary/՝ այն «տխուր կամ վրդովված լինելու ուժեղ զգացմունք է, քանի որ որևէ բան սխալ է կամ չի ստացվել. այն զգացմունքը, որը ստիպում է մարդկանց ցանկանալ վնաս, ցավ պատճառել այլ մարդկանց»: Մեկ այլ՝ երրորդ բառարանը՝ Longman American English /Longman Dictionary, 2007: 35/, սահմանում է anger բառը հետևյալ կերպ. «որևէ մեկին վնաս, ցավ պատճառել կամ քննադատելու ուժեղ զգացմունք, քանի որ նա որևէ է վատ բան է Ձեզ արել կամ Ձեր նկատմամբ բարի չի գտնվել»: Ինչպես տեսնում ենք, առաջին երկու սահմանումների մեջ ընդհանրական է վրդովմունքի առկայությունը՝ որպես գայրույթ հույզի անքակտելի մաս, մինչդեռ վերջին երկուսում ընդհանուր է որևէ մեկին վնաս

կամ ցավ պատճառելու ցանկությունը՝ որպես զայրույթ հույզի բնական հետևանք:

Ելնելով բառարանային սահմանումներից՝ կարող ենք եզրակացնել, որ, «զայրույթ» հույզ արտահայտող հոմանիշային շարքի համար որպես իմաստային միջուկ գործելով, anger բառը բնութագրվում է նվազագույնը երկու հատկանիշով՝ վրդովմունք և վնաս, ցավ պատճառելու ցանկություն: Առաջին խմբի իմաստային կորիզը կլինի համապատասխանաբար վրդովմունքի հույզը, իսկ երկրորդը՝ զայրույթ հույզի պաճառով առաջացած վնաս կամ ցավ պատճառելու ցանկությունը: Այսինքն, առաջին դեպքում գործ ունենք հույզ-հոգեվիճակի հետ, իսկ երկրորդում՝ հույզից առաջացած ցանկության: Առաջին դեպքում «վրդովմունք» հույզը ընդլայնում է «զայրույթ» հույզի իմաստային դաշտը, քանի որ վերջինս ներառում է իր մեջ նաև «վրդովմունք» հույզի իմաստային դաշտը: Սահմանման հաջորդ կետը՝ ցավ, վնաս պատճառելու ցանկությունը, որն առաջացնում է զայրույթը, պարունակում է պատճառահետևանքային կապ: Սա նշանակում է, որ գոնե բառարանային սահմանման մակարդակով զայրույթ հույզի բոլոր դրսևորումներում ընդհանրական են լինելու վրդովմունք հույզի առկայությունը և պատճառահետևանքային կապը:

Հարկ է նշել, որ ինչպես ցանկացած բառարանային սահմանում, այն ևս համապարփակ չէ: Այսպես, հոմանիշային շարքը դիտարկելիս ի հայտ են գալիս հույզի այլ ընդհանրական հատկանիշներ՝ բացի վերոնշյալ երկուսից:

Vocabulary.com առցանց բառարանը տարբերակում է զայրույթի՝ որպես զգացմունքի 19 հիմնական տեսակ: Դրանք են՝

1. չափազանց ուժգին, կատաղության հասնող զայրույթի զգացմունք (fury, madness, rage),
2. չափազանց ուժգին, կատաղության հասնող զայրույթի զգացմունք (enragement, infuriation),
3. զայրույթի զգացմունքը, որն առաջացել է որևէ մեկին վիրավորելու հետևանքով (offence, umbrage),
4. զայրույթի զգացմունքը, որն առաջացել է որևէ մեկին վիրավորելու հետևանքով (indignation, outrage),
5. արդարացված զայրույթի զգացմունք (huffiness),
6. զայրույթի և վիրավորանքի անցողիկ վիճակ (dander, hackles),
7. զայրույթի և թշնամության զգացմունք (bad temper, ill temper),
8. շարունակական զայրույթի տրամադրություն (annoyance, chafe, vexation),
9. որևէ նյարդայնացնող բանի պատճառով առաջացած զայրույթ (dudgeon, high dudgeon),
10. ուժգին վրդովմունքի զգացում (այժմ օգտագործվում է միայն in high dudgeons արտահայտությամբ),
11. ուժգին զայրույթ (սովորաբար էպիկական մասշտաբով) (wrath),
12. զայրույթի այնպիսի մի աստիճան, որի պատճառով դեմքը կորցնում է իր գույնը (lividity),
13. զայրույթի հանկարծակի պոռթկում (irritation, pique, temper),

14. խոչընդոտի հանդիպելու կամ քննադատության ենթարկվելու վրդովմունքի զգացումը (frustration),
15. վրդովմունքի սրտնեղած զգացումը (aggravation, exasperation),
16. ուժգին վրդովմունքի զգացում, որը հետևանք է հալածանքների (harrassment, torment),
17. որևէ բանից կամ որևէ մեկից դժգոհ, վրդովված կամ չբավարարված լինելու զգացումը (displeasure),
18. անարդար վիրավորված լինելու զայրույթը (irascibility, quick temper, short temper, spleen),
19. վատ տրամադրության ցուցադրումը (conniption, fit scene, tantrum):
/Vocabulary.com/

Այս դասակարգումները առաջին հայացքից երբեմն կրկնվում են (ինչպես, օրինակ, համար մեկ և երկուսում), այսինքն՝ չունեն միայն մեկ սկզբունք, ըստ որի և ներկայացվել է զայրույթ հույզի իմաստաբանական դաշտը: Համեմայն դեպք, կարող ենք ի դերև համել մի քանի ընդհանրություններ, ինչպիսին են ուժգնությունը կամ մեղմությունը և պատճառահետևանքային կապը: Մինչդեռ ծայրային՝ պերիֆերալ իմաստ ցույց տվող հոմանիշները իրենցից ներկայացնում են արդարացված լինել կամ չլինելու փաստը: Այլ կերպ ասած՝ անպայման չէ, որ զայրույթը բնութագրվի որպես արդարացված կամ ոչ արդարացված: Սակայն հնարավոր չէ, որ այն չունենա ուժգնության կամ մեղմության որևէ աստիճան: Հաշվի առնելով այս ընդհանրությունները և տարբերությունները՝ վերաշարադրենք դասակարգումը:


Ըստ anger իմաստաբանական դաշտի մեղմության և ուժգնության՝ զայրույթի հիմնական և ընդհանրական հատկանիշի՝ կունենաք մի պատկեր, որտեղ վատ տրամադրության ցուցադրության (conniption, fit scene, tantrum) բառաշարքը կլինի նվազագույն ուժգնություն ունեցողը: Սակայն եթե զայրույթի ամենամեղմ դրսևորման հետ կարելի է համաձայնել, ապա ավելի բարդ կլինի որոշել ամենաուժգին ցասում արտահայտող բառաշարքը: Տարբերակները մի քանիսն են. դա կարող է լինել հալածանքների պատճառով առաջացած զայրույթի շարքը (harrassment, torment), էպիկական մասշտաբով արտահայտված զայրույթինը (wrath), կամ զայրույթի այնպիսի մի աստիճան, որի պատճառով դեմքը կորցնում է իր գույնը (lividity): Քանի որ զայրույթը իրենից ներկայացնում է բասացական հույզ, ապա դրա առավել ուժգին, ուստի և ամենաբասացական լեզվական դրսևորումները կունենան ավելի ցայտուն և հարուստ դրսևորում, իսկ մեղմ, չնչին դրսևորումները կլինեն առավել նվազ: Այսինքն, բնական է, որ որևէ դրական հույզի մեջ ավելի թույլ և, այսպիսով, ավելի լեզվաբանորեն հստակ կլինի բացասական երանգի դրսևորումը, քան դրականինը, քանի որ վերջիններս կլինեն բազմազան: Այսպես, վերադառնալով զայրույթ իմաստաբանական դաշտի քննարկմանը՝ նշենք, որ իր բացասական հարանշանակությունն ավելի վառ է արտահայտված, և այդ իսկ պատճառով այս դաշտը ավելի հարուստ է ներկայացված ուժգնության աճին համընթաց: Vocabulary.com-ի կողմից ներկայացված դասակարգման 1 և 2 կետերը, թվում

է, թե համընկնում են, քանի որ երկուսն էլ նկարագրում են ուժգին զայրույթի զգացմունք:


Fury, madness, rage բառաշարքի մի կողմից, իսկ մյուս կողմից՝ enragement, infuriation շարքի իմաստային տարբերությունը կդառնա, սակայն, ակնհայտ, եթե դիմենք անգլերենի առցանց տեսողական թեզաուրուսի օգնությանը:

Տեսողական թեզաուրուսը մի առցանց համակարգ է, որը պատկերավոր ցուցադրում է բառի իմաստային դաշտը: Իմաստաբանական վերլուծության համար այն կարող է շատ օգտակար լինել, քանի որ կենտրոնում ներկայացնում է որևէ իմաստային դաշտի միջուկը՝ տվյալ դեպքում anger՝ զայրույթ բառը, որը և զայրույթ հույզի ուղղակի թարգմանությունն է, ինչպես նշել ենք վերևում: Գծային պատկերմամբ տեսողական թեզաուրուսը թույլ է տալիս նշել բառերի՝ միմյանցից ունեցած հեռավորությունը: Իհարկե, բառը չի կարելի նույնականացնել հույզի հետ, սակայն տվյալ դեպքում, քանի որ anger բառը համընկնում է anger հույզի հետ, նպատակահարմար ենք գտնում այս համակարգից օգտվելը: Ի թիվս այլ դրական կողմերի՝ թեզաուրուսը կարող է օգնել հստակ տեսնել բառերի միջև եղած հեռավորությունը, այսինքն՝ իմաստային տարբերակում մտցնել և ներկայացնել նրանք փոխկապակցվածության աստիճանը: Ստորև բերված առաջին նկարում ընտրել ենք առաջին խմբից rage բառը, իսկ երկրորդում՝ infuriation-ը: Սա թույլ է տալիս իմաստային առումով տարբերակել երկու՝ ուժգին զայրույթի զգացմունք ցույց տվող բառախմբերը և համեմատել դրանց ուժգնության աստիճանը:

Նկար 1.



Նկար 2.



Այս պատկերավոր թեզաուրուսը զայրույթը (anger) ներկայացնում է որպես այդ զգացմունքի իմաստային միջուկ, ուր fury, madness, rage շարքը կրկին ներկայացված է միմյանց ավելի մոտիկ քան enragement, infuriation շարքը: Դա պատկերված է վերը բերված նկարներում:

Ներկայացված նկարների մեր ուսումնասիրությունը նպատակահարմար ենք գտնում կատարել աջից ձախ, քանի որ anger՝ զայրույթ լեզվական միավորը, որն այս դեպքում հանդես է գալիս որպես միջուկ, իր իմաստային ամենահեռավոր դրսևորումներով էապես հեռանում է իր հիմնական իմաստային միջուկից, սակայն այն իմաստային դաշտը, որը միացնում է զայրույթը իր հեռահար հոմանիշային շարքի հետ, ներկայացված է rage բառով: Վերջինս կապող օղակ է հանդիսանում այլ հասկացությունների և anger-ի միջև ու հանգեցնում է որակական իմաստային փոփոխությունների ինչպիսին են՝

- anger→rage→violence
- anger→rage→storm
- anger→rage→passion
- anger→rage→fury և այլն:

Հատկանշական է, որ բնության տարրերը ինչպիսին են փոթորիկը՝ storm-ը, բխում են rage-ի՝ կրիտիկական կետից, և «զայրույթ» հասկացությունը փաստորեն անցնում է մի վիճակից մեկ այլ վիճակի:

Նկար 1-ից /Visual Thesaurus.com/ տեսնում ենք, որ rage-ը՝ իր fury և madness հոմանիշների հետ ուղիղ կապ ունի anger-ի հետ իմաստաբանական տեսակետից և, այսպիսով, զայրույթի ուժգին տեսակ է, մինչդեռ նկար 2-ից /Visual Thesaurus.com/ պարզ է դառնում, որ enragement-ը և infuriation-ը զայրույթի ուղղակի միջուկից հեռվացած են: Ստացվում է, որ չնայած այն փաստին, որ այս երկու բառիմաստային խմբերը արտահայտում են ուժգին զայրույթ, դրանցից առաջինը (rage, fury, madness) իմաստաբանական տեսակետից զայրույթի անմիջական դրսևորում է, մինչդեռ երկրորդը (enragement, infuriation) զայրույթի դույզն-ինչ ավելի հեռվացած դրսևորում է, որը նրան այս առումով ավելի մեղմ է դարձնում:

Չայրույթը՝ որպես լայն տարածում ունեցող հույզ, իր դրսևորումն է գտնում նաև պատկերավոր խոսքում՝ փոխաբերության տեսքով: Եթե այդ փոխաբերությունները պատկերենք բայական տեսքով, ապա կստանանք հետևյալ պատկերը՝

1. Չայրույթը կարող է եռալ, օրինակ՝ *She is boiling with anger*, որը բառացիորեն թարգմանվում է որպես նա եռում է զայրույթից:
2. Չայրույթը որպես կրակ, զայրույթը կարող է այրվել, օրինակ՝ *His anger is smoldering* (իր զայրույթը այրվում է):
3. Չայրույթը որպես խելագարություն, այն նման է խենթացման՝ *The man was insane with rage* (տղամարդը ցասումից խենթանում էր):
4. Չայրույթը որպես բախում, այն առաջացնում է պայքար՝ *I was struggling with my anger* (ես պայքարում էի իմ զայրույթի դեմ):
5. Չայրույթը որպես պոռթկում, այն առաջացնում է պոռթկում՝ *He unleashed his anger* (նա բաց թողեց իր զայրույթը):
6. Չայրույթը որպես շարժում, այն կարելի է քարշ տալ՝ *He carries his anger around with him* (նա իր զայրույթը իր հետ է քարշ տալիս):
7. Չայրույթը որպես ձայնային համադրություն, այն կարող է գռմռալ՝ *Don't snarl at me!* (մի՛ գռմռա ինձ վրա):
8. Չայրույթը որպես հանգուցալուծում, հասցնելու միջոց՝ *that really got him going* (դա նրան իսկապես հասցրեց):
9. Չայրույթը որպես կառավարման միջոց՝ *His actions were completely governed by anger* (իր գործողությունները ամբողջապես կառավարվում էին զայրույթի կողմից):
10. Չայրույթը որպես կլանող միջոց՝ *He was consumed by anger. That just added fuel to the fire.* (նրան կլանել էր զայրույթը) /Esenova, 2007: 3-7/:

Վերոնշյալ 10 բայը, կարծում ենք, չի կարող այս հույզի մասին սպառիչ պատկերացում տալ, քանի որ լեզուն՝ որպես փոփոխական օրգանիզմ, նախևառաջ փոփոխական է փոխաբերությունների հարցում. սա նշանակում է, որ տեսականորեն զայրույթ հույզի շուրջ կազմված փոխաբերությունները անվերջ են: Սակայն այս տարատեսակ օրինակների (և բազում այլ հնարավոր օրինակների) իմաստաբանական ընդհանրությունը կայանում է նրանում, որ դրանք բոլորը ցույց են տալիս ուժգին հույզեր: Գժվար թե գռմռալը կամ այրվելը կարող են դիտարկվել որպես չեզոք հույզ արտահայտող բառեր: /O'Dell, McCarthy, 2010: 16/ Առաջին դասակարգման մեջ նշված *anger*՝ զայրույթ հույզի ընդհանրական իմաստային տարրը՝ ուժգնությունը, այսպիսով դրսևորվում է նաև պատկերավոր լեզվում: Վերոնշյալ բոլոր բայերն ունեն ուժգնության դաշտ, և նույնիսկ թվացյալ չեզոք

կառավարել բայը իմաստապես միշտ կապակցվում է ուժգնություն ունեցող իրավիճակների հետ, ինչպիսիք են՝ կառավարել իրավիճակը, համակարգը և այլն: Այսինքն, գայրույթ հույզը պահանջում է իր նկատմամբ ուժի այս կամ այն կիրառումը /Davey, Day, 2007: 293-309/:

Մինչդեռ, վերադառնալով վերոնշյալ արդարացվածության յուրահատկությանը՝ կարող ենք նկատել, որ վերոնշյալ 10 բայերում նույնպես այն ընդհանրական չէ: Պայքարել բայը իմաստապես կապված է գայրույթի արդարացված կամ ոչ արդարացված լինելու հետ: Օրինակում ասվում է. «ես պայքարում եմ իմ գայրույթի դեմ», որը նշանակում է, որ անձը հասկանում է, որ իր գայրույթը արդարացված չէ և այն հարկավոր է մեղմել: Ի հակառակ դրան՝ հասնել բայը ցույց է տալիս, որ գայրույթը արդարացված էր: Սակայն նույնը չի կարելի պնդել ներկայացված բոլոր բայերի մասին: Չայրույթից խենթանալը բնավ չի մատնանշում պատճառը, թե արդյոք այն արդարացված էր, թե՛ ոչ:

Այսպիսով, գայրույթի արդարացվածության աստիճանը չի կարող անգլերենում ընդհանրական յուրահատկություն համարվել, մինչդեռ ուժգնությունը ներկա էր ինչպես գայրույթի՝ 19 խմբից բաղկացած իմաստային դասակարգման, այնպես էլ փոխաբերությունների մեջ բայերի արտահայտած իմաստի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Davey L., Day A. The Poetics of Anger Control: Metaphorical Conceptualisations of Anger Expression in Violent Offenders // *Psychology of Anger*. NY: Nova Science Publishers, 2007.
2. Esenova O. Anger metaphors in the English language. Helsinki: CA&CC Press, 2007.
3. O'Dell F., McCarthy M. English Idioms in Use. Cambridge: Cambridge University Press, 2010.
4. Телия В. Н. Коннотативный аспект семантики номинативных единиц. М.: Наука, 1986.
5. Longman Dictionary of American English. England: Pearson, 2007.
18. Meriam-Webster Dictionary // available online at: <http://www.merriam-webster.com/dictionary/anger>
6. Oxford Dictionary // <http://www.oxforddictionaries.com/definition/english/anger>
7. Visual Thesaurus.com // available online at: <https://www.visualthesaurus.com/>
8. Vocabulary.com <http://www.vocabulary.com/dictionary/anger>

Ш. МЕЛИК-АДАМЯН – О некоторых семантических особенностях эмоции «злость» в английском языке. – В статье рассматриваются семантические особенности эмоции «злость» в английском языке. Выявлены как общие, так и отличительные черты синонимичного ряда эмоции «злость» на основе различных классификаций данной эмоции.

Ключевые слова: злость, эмоция, эмотивность, синонимичный ряд, интенсивность, общая характеристика, отличительная особенность

SH. MELIK-ADAMYAN – Some Semantic Peculiarities of the Emotion “Anger” in English. – The purpose of this paper is to reveal some semantic peculiarities of the emotion “anger” in the English language. Both common and distinctive features of a number of synonyms of the emotion “anger” are presented on the basis of the various classifications of the emotion.

Key words: anger, emotion, emotiveness, set of synonyms, intensity, general characteristics, distinguishing characteristics